ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<03>> մարտ 2015
ք. Եղեգնաձոր

N 22

<<ՄԱԼԻՇԿԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ <<ՄԱԼԻՇԿԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի, 65-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի թիվ 41-Ա որոշումը

Որոշում եմ

1. *Հաստատել <<Մալիշկայի ԱԱՊԿ>> փակ բաժնետիրական ընկերության գույքի և գույքային իրավունքների՝ <<Մալիշկայի ԱԱՊԿ>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը՝ համաձայն հավելված 1-ի, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին վերաբերվող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ:*
2. *Հաստատել <<Մալիշկայի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:*
3. *Հանձնարարել <<Մալիշկայի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի տնօրենին մեկամսյա ժամկետում ընկերության կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:*

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ